**Արձանագրություն N 2**

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար «Մուտքի հսկողության համակարգի վերանորոգման ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԵՀԾՁԲ-15/9-04» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«27» սեպտեմբերի 2016թ.
ժամը՝ 11:30

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

| | |
|---|---|
| Էլյադա Արզաքանյան | (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար |

*հանձնաժողովի անդամներ՝*

| | |
|---|---|
| Կարեն Մելքոնյան | (Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար, |
| Կարեն Համբարձումյան | (Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար, |
| Ալետիք Ավագյան | (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար, |
| Սարգիս Արմենակյան | (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար: |

*Հանձնաժողովի քարտուղար՝*

**Մարիամ Հայրապետյան** (Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

**1. «ԴԴ-ԵՀԾՁԲ-15/9-04» ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտերի բացման մասին.**

1.1 Հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի /այսուհետ՝ Համակարգ/ միջոցով 2016թ.-ի սեպտեմբերի 27-ին, ժամը 11:30-ին:

**2.Տեղեկատվություն գնման առարկայի ընդհանուր /նախահաշվային/ գնի վերաբերյալ.**

2.1 Գնումն իրականացվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի հիման վրա:

2.2 Սույն գնման մասով պատասխանատու ստորաբաժանումը «Մոտոցի հսկողության համակարգի վերանորոգման ծառայությունների» գնման՝ հաստատված հայտով սահմանել է, որ <<Գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը>>:

2.3 Հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը՝

| N | Մասնակցի անվանումը | Գտնվելու վայրը, հեռախոսահամարը |
|---|---|---|
| 1 | «Էլիպս Ջիէյ» ՍՊԸ | ՀՀ ք. Երևան, Ն. Տիգրանյան 27<br>Հեռ. (010)231520 (091)011619 |

2.4 Համակարգում 16.09.2016թ.-ի դրությամբ գրանցված մնացած բոլոր հնարավոր մասնակիցները հայտեր չեն ներկայացրել:

**3.1 Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

3.1.1 «Էլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ 5, դեմ 0:

**3.2 Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի /հայտում առկա փաստաթղթերի/ հրավերի պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.**

3.2.1 «Էլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում. կողմ 5, դեմ 0:

**4. Մասնակցի առաջարկած գինն է՝**

ՀՀ դրամ

| Չ/Հ | Չափաբաժնի անվանումը | 1. «Էլիպս Ջիէյ» ՍՊԸ | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Ինքնարժեք | Շահույթ | Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ |
| 1 | Մոտոցի հսկողության համակարգի վերանորոգման ծառայություններ | 3,864,000 | 568,055 | 4,432,055 | 886,411 | 5,318,466 |

5. Հաշվի առնելով սույն արձանագրության 2.2 կետը և հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետը՝ անհրաժեշտություն է առաջանում ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակցի՝ «Էլիտպս Քիէյ» ՍՊԸ-ի հետ վարելու գնի նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

**Հանձնաժողովը որոշեց.**

Միաժամանակյա բանակցություններ վարելու հանգամանքով պայմանավորված՝ հանձնաժողովի նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2016թ. սեպտեմբերի 30-ին՝ ժամը 12:00-ին՝ <<ՀՀ դատական դեպարտամենտ> ՊԿՀ-ի վարչական շենքում (Վ. Սարգսյան 5)՝ VI հարկի նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ______________ Էլյադա Արզաքանյան

Անդամներ՝

______________ Կարեն Մելքոնյան

______________ Կարեն Համբարձումյան

______________ Ավետիք Ավագյան

______________ Սարգիս Արմենակյան

Քարտուղար՝

______________ Մարիամ Հայրապետյան